ՀՀ 2005 թ. Սահմանադրության և գործող օրենքների համեմատությամբ ՀՀ նախագահի և ՀՀ վարչապետի լիազորությունների վերաբաշխումը ըստ ՀՀ 2015 թ. Սահմանադրության և մշակվող օրենսդրական փոփոխությունների վերլուծություն

Վերլուծությունն իրականացվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավական վերլուծությունների և նախաձեռնությունների մասնագետ Արտուր Հարությունյանի կողմից

Սույն փաստաթղթով ներկայացվում է 2005թ. ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ՀՀ նախագահի լիազորությունների շրջանակը և դրանց վերաբաշխումը ՀՀ նախագահի և ՀՀ վարչապետի միջև ըստ 2015թ. Սահմանադրության: Ուսումնասիրվել և ամփոփվել է պետական մարմինների հաշվետվողականությունը մինչև 2015թ. Սահմանադրության լիիրավ ուժի մեջ մտնելը և դրանից հետո:

ՀՀ սահմանադրական փոփոխությունները հիմնավորվում էին այն իրավաքաղաքական հիմնավորմամբ, որ Հայաստանի Հանրապետության կառավարման գործող մոդելը իրեն սպառել է և անհրաժեշտ է անցնել խորհրդարանական կառավարման ձևին, ինչը բնականաբար ենթադրում էր Հայաստանի Հանրապետության խորհրդարանի՝ Ազգային ժողովի դերի բարձրացում, գործադիր իշխանության նկատմամբ պառլամենտական վերահսկողական գործիքների ընդլայնում և հստակեցում, ինչպես նաև պառլամենտի առջև պետական մարմինների հաշվետվողականության կանոնակարգում: Կարևոր է հիշել, որ անկախ կառավարման ձևից ժողովրդավարական և իրավական պետության գլխավոր իրավաբանական փաստաթղթի՝ Սահմանադրության հիմնական խնդիրն է գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատման և հակակշռման սկզբունքի արդյունավետ ապահովումը, որի հիման վրա էլ սահմանադրական փոփոխությունները դիտարկվել են սույն վերլուծության մեջ:

Աղուսյակ №1-ով ներկայացվում է պետական մարմինների ղեկավար կազմին նշանակելու ՀՀ նախագահի լիազորությունները:

Աղուսյակ №2-ով ներկայացվում է ՀՀ Նախագահի մյուս լիազորությունները, որոնք կապված չեն պաշտոնի նշանակման հետ:

Աղուսյակ №3-ով ներկայացվում է պետական մարմինների հաշվետվողականության կարգավորումների համեմատությունը ըստ 2015 թ. և 2005թ. Սահմանադրությունների և դրանց հիման վրա ընդունված կամ ընդունվող օրենքների:

Աղյուսակ №1.

Պետական մարմինների ղեկավար անձնակազմի նշանակման ՀՀ նախագահի լիազորությունները

Հ/Հ	Նշանակվող պետական մարմին (ղեկավար/տեղակալ)	2005թ. ՀՀ Սահմանադրությունն ու համապատասխան օրենքները		2015թ. ՀՀ Սահմանադրությունն ու մշակվող օրենքների նախագծերը	
		Լիազորություն	Իրավական հիմք	Լիազորություն	Իրավական հիմք
1.	ՀՀ վարչապետ	ՀՀ նախագահը ունի հայեցողական լիազորություն, գրեթե կաշկանդված չէ վարչապետի թեկնածուի և նշանակման հարցում: ՀՀ նախագահը վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին:	ՀՀ Սամանադրության 55-րդ հոդվածի 4-րդ մասը:	ՀՀ նախագահը կաշկանդված է և չունի այլընտրանք, վարչապետ կարող է նշանակել խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին: Վարչապետի հրաժարականի, պաշտոնի թափուր մնալու դեպքում ՀՀ նախագահը վարչապետին նշանակում է Ազգային ժողովի կողմից ընտրված վարչապետին:	ՀՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:
2.	ՀՀ կառավարության անդամ (փոխվարչապետ, նախարարներ)	Հանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին:	ՀՀ Սամանադրության 55-րդ հոդվածի 4-րդ մասը:	Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ եռօրյա ժամկետում կամ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին, կամ դիմում է Սահմանադրական դատարան: Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սահմանված պահանջները, ապա համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը	ՀՀ Սահմանադրության 150-րդ հոդված:

				նշանակված է համարվում իրավունքի ուժով:	
3.	Ազգային անվտանգության խորհուրդ	ՀՀ նախագահը կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդը և նախագահում է այն:	ՀՀ Սամանադրության 55-րդ հոդվածի 6-րդ մասը:	Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:	ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին մասը:
4.	Դիվանագիտական ներկայացուցիչ	Նշանակում է ՀՀ նախագահը:	ՀՀ Սամանադրության 55-րդ հոդվածի 8-րդ մասը:	Նշանակում է ՀՀ նախագահը վարչապետի առջարկությամբ:	ՀՀ Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:
5.	Գլխավոր դատախազի տեղակալ	ՀՀ նախագահը գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազի տեղակալներին:	ՀՀ Սամանադրության 55-րդ հոդվածի 9-րդ մասը:	Գլխավոր դատախազը /որակավորման հանձնաժողով, եթե դատախազը չի նշանակում/:	Դատախազության մասին նոր օրենքի 36-րդ հոդվածը /ընդունվել է 17.11.2017թ./:
6.	Սահմանադրական դատարանի դատավորներ	ՀՀ նախագահը նշանակում է սահմանադրական դատարանի չորս անդամ, իսկ Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահ չնշանակելու դեպքում՝ սահմանադրական դատարանի կազմից սահմանադրական դատարանի նախագահ:	ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 10-րդ մասը:	Ազգային ժողովը ընտրում է Սահմանադրական դատարանի դատավորներին պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, որոնցից երեքն ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ:	Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասը:
7.	Վճռաբեկ, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներ	Նշանակում է ՀՀ Նախագահը՝ արդարադատության խորհրդի առաջարկությամբ:	ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ մասը:	Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին և վճռաբեկ դատարանի նախագահին նշանակում է Ազգային ժողովը՝ Բարձրագույն դատական խորհդի առաջարկությամբ: Վերաքննիչ դատարանների և առաջին ատյանի դատարանների	Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերը:

				նախագահներին նշանակում է ՀՀ նախագահը:	
8.	Վճռաբեկ դատարանի դատավորներ	Նշանակում է ՀՀ Նախագահը՝ արդարադատության խորհրդի առաջարկությամբ:	ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ մասը:	Նշանակում է ՀՀ Նախագահ՝ Ազգային ժողովի առաջարկությամբ:	Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասը
9.	Վերաքննիչ դատարանի, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանի դատավորներ	Նշանակում է ՀՀ Նախագահը՝ արդարադատության խորհրդի առաջարկությամբ:	ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ մասը:	Նշանակում է ՀՀ Նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:	Սահմանադրության 166-րդ հոդվածի 6-րդ մասը:
10.	Արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամ	Նշանակում է ՀՀ Նախագահը՝ արդարադատության խորհրդի առաջարկությամբ	ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 11.1-րդ մասը:	Նոր Սահմանադրությամբ այլևս գոյություն չի ունենալու արդարադատության խորհուրդ, այն փոխարինվում է Բարձրագույն դատական խորհրդով, որը կազմված է 10 անդամից, դրանցից 5-ին ընտրում են Դատավորների ընդհանուր ժողովը, մյուս 5-ին՝ Ազգային ժողովը:	Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը
11.	Զինված ուժերի և այլ զորքերի հրամանատարական կազմ	ՀՀ նախագահը նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը:	ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 12-րդ մասը:	Նշանակում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:	Սահմանադրության 133-րդ հոդվածի:
12.	Քննչական կոմիտեի նախագահ, Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներ	Քննչական կոմիտեի նախագահին նշանակում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ: Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին նշանակում է ՀՀ նախագահը՝ քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ:	«ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը:	Քննչական կոմիտեի նախագահին նշանակում է կառավարությունը՝ վարչապետի ներկայացմամբ: Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին նշանակում է ՀՀ վարչապետը՝ քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ:	Շրջանառության մեջ է դրված «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

				Սահմանադրությամբ այս հարցը լուծված չէ:	
13.	Հատուկ քննչական ծառայության պետ	Հատուկ քննչական ծառայության պետին նշանակում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ:	«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք-ի 9-րդ հոդվածի 1-ին մասը:	Հատուկ քննչական ծառայության պետին նշանակում է կառավարությունը՝ վարչապետի ներկայացմամբ: Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալներին նշանակում է վարչապետը՝ հատուկ քննչական ծառայության պետի ներկայացմամբ: Սահմանադրությամբ այս հարցը լուծված չէ:	Շրջանառության մեջ է դրված «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:
14.	Քրեակատարողական վարչության պետ	Քրեակատարողական վարչության պետին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջարկությամբ:	«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը:	Քրեակատարողական ծառայության պետին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:	Շրջանառության մեջ է դրված «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

15.	Ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավար և տեղակալ (ոստիկանության պետ, պետի տեղակալ)	Պետական կառավարման մարմնի ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ: Պետական կառավարման մարմնի ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ պետական կառավարման մարմնի ղեկավարի առաջարկությամբ:	«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ոստիկանության պետին և վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է ՀՀ նախագահը: Ոստիկանության պետի տեղակալներին Ոստիկանության պետի միջնորդության հիման վրա վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Հանրապետության նախագահը:	Շրջանառության մեջ է դրված «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:
16.	Ոստիկանության զորքերի հրամանատար	ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը:	«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ոստիկանության զորքերի հրամանատարին Ոստիկանության պետի միջնարդության հիման վրա վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Հանրապետության նախագահը:	Շրջանառության մեջ է դրված «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:
17.	Գլխավոր հարկադիր կատարող /ԴԱՀԿ պետ/	Գխավոր հարկադիր կատարողին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջարկությամբ:	«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը:	Գլխավոր հարկադիր կատարողին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:	Շրջանառության մեջ է դրված «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի

					նախագիծը:
18.	Ազգային անվտանգության լիազոր մարմնի ղեկավար /ԱԱԾ պետ/	Պետական լիազոր մարմնի ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ:	«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը:	Լիազոր մարմնի անմիջական ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:	Շրջանառության մեջ է դրված «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու ՀՀ օրենքի նախագիծը:
19.	Ազգային անվտանգության լիազոր մարմնի ղեկավարի տեղակալ /ԱԱԾ պետի տեղակալ/	Պետական լիազոր մարմնի ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը:	«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը:	Պետական լիազոր մարմնի ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ՝ լիազորված մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա:	Շրջանառության մեջ է դրված «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու ՀՀ օրենքի նախագիծը:
20.	Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամներ	Նշանակում է ՀՀ նախագահը:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հրապարակվել է e-draft.am կայքում 2017 թվականի մարտի 23-ին: Նախագծով առաջարկվող տարբերակում խորհրդի անդամները նշանակվելու էին մրցութային հանձնաժողովի կողմից: Նախագծով որևէ խոսք չկար վարչապետին նշանակում կատարելու լիազորությամբ օժտելու վերաբերյալ: Սակայն նախագիծը արդեն Ազգային ժողովի օրակարգ է մտել փոփոխված տարբերակով, որը	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Հղումը e-draft կայքում:

				հանրային քննարկման չի դրվել և ըստ փոփոխված տարբերակի վարչապետին է վերապահվել լիազորություն ընտրելու խորհրդի անդամներին:	

Աղուսակ №1.1

Աղյուսակ №1 –ի թվային ամփոփում

	Լիազորությունների ընդհանուր թիվը (այդ թվում ուղղակի և անուղղակի)	Լիազորության բնույթը			Այլ նշում
		Ուղղակիորեն	Անուղղակիորեն (փաստացի)	Կաշկանդված է ներկայացված առաջարկությամբ և չի կարող նշանակում չկատարել	
ՀՀ նախագահի ղեկավար պաշտոններում նշանակումներ կատարելու լիազորությունների թիվը համաձայն 2005թ. Սահմանադրության և դրա հիման վրա ընդունված օրենքների	19	19	0	0	-
ՀՀ նախաագահի ղեկավար պաշտոններում նշանակումներ կատարելու լիազորությունների թիվը համաձայն նոր Սահմանադրության և դրա հիման վրա մշակվող օրենքների	7	0	0	7	Նշանակումները կատարվում են վարչապետի առաջարկությամբ
ՀՀ վարչապետին փոխանցված լիազորությունների թիվը 2015թ. Սահմանադրությամբ և դրան համապատասխան մշակված օրենքների	13	4	9	0	-
ՀՀ Կառավարությանը փոխանցված լիազորությունների թիվը 2015թ. Սահմանադրությամբ և դրան համապատասխան մշակված օրենքների	2	0	0	2	Նշանակումները կատարվում են վարչապետի առաջարկությամբ
ՀՀ Ազգային ժողովին փոխանցված լիազորությունների թիվը 2015թ. Սահմանադրությամբ և դրան համապատասխան մշակված օրենքների	6	6	-	0	

Վերոնշյալ աղյուսակների տվյալները ցույց են տալիս, որ 2005թ. Սահմանադրությամբ և դրա հիման վրա ընդունված օրենքների համաձայն՝ ՀՀ նախագահը լիազորված էր նշանակելու թվով 19 պետական պաշտոններ, այդ թվում դատավորների և դատարանների նախագահներին, արդարադատության խորհրդի 2 իրավաբան-գիտնականին, ինչպես նաև որոշակի պետական մարմինների պետի տեղակալներին:

2015թ. Սահմանադրությամբ և դրա հիման վրա մշակվող օրենքների համաձայն՝ ՀՀ նախագահի նախկին լիազորությունները բաշխվել են ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի մեջ, որոնցից՝

- Թվով 4 պաշտոններում (ազգային անվտանգության խորհուրդի կազմ, քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, քրեակատարողական վարչության պետ, գլխավոր հարկադիր կատարող) նշանակումները կատարելու է վարչապետը՝ ուղղակիորեն;
- Մյուս լիազորություններից 7-ի (կառավարության անդամներ, դիվանագիտական ներկայացուցիչ, զինված ուժերի և այլ զորքերի հրամանատարական կազմ, ոստիկանության պետ, ոստիկանության զորքերի հրամանատար, ազգային անվտանգության ծառայության պետ, ազգային անվտանգության ծառայության պետի տեղակալ) դեպքում նշանակումը կատարելու է ՀՀ նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ, ընդ որում՝ ՀՀ նախագահին վերապահված չէ վարչապետի առաջարկը մերժելու հնարավորություն և վարչապետի առաջարկած թեկնածուին ՀՀ նախագահը պետք է նշանակի նշված պաշտոնում, եթե թեկնածուի կարգավիճակը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին: Ակնհայտ է, որ այս դեպքում իրական նշանակում կատարողը (որոշում կայացնողը) ևս հանդիսանում է ՀՀ վարչապետը;
- Լիազորություններից 2-ի (Քննչական կոմիտեի նախագահ և Հատուկ քննչական ծառայության պետ) դեպքում նշանակումը կատարում է ՀՀ կառավարությունը՝ վարչապետի առաջարկությամբ, ընդ որում՝ պարզ և տրամաբանական է, որ ՀՀ կառավարության որևէ անդամ չի կարող դեմ գնալ վարչապետի առաջադրած թեկնածությանը, քանի որ ՀՀ կառավարության անդամները կախվածության մեջ են ՀՀ վարչապետից: Այսինքն սույն պաշտոններում իրական որոշում կայացնողը հանդես է գալիս ՀՀ վարչապետը:
- Լիազորությունների մյուս մասը՝ Սահմանադրական դատարանի դատավորների, դատարանների դատավորներին և դատարանների նախագահների նշանակումները վերապահվել են ՀՀ Ազգային ժողովին: Այստեղ հարկ է ընդգծել, որ ՀՀ Ազգային ժողովի մեծամասնություն կազմողը հենց նույն՝ իշխող կուսակցության, այսինքն՝ վարչապետին ընտրող քաղաքական մեծամասնությունն է:

2005թ. ՀՀ Սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով պետական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների նշանակման ՀՀ նախագահի 19 լիազորություններից 13-ը 2015թ. Սահմանադրությամբ վերապահվում է ՀՀ

վարչապետին, դրանցից 4-ը ուղղակիորեն, 9-ը՝ միջնորդավորված (փաստացի որոշում կայացնողը վարչապետն է): Մնացած 6 նշանակումները վերաբերվում են դատական իշխանության մարմիններին, որոնք ՀՀ Ազգային ժողովում իրականացվում են քաղաքական կայուն մեծամասնության որոշիչ քվեարկությամբ, այսինքն վարչապետին ընտրող քաղաքական մեծամասնության կողմից:

Ամբողջացնելով, կարելի է գալ այն եզրահանգման, որ 2015թ. ՀՀ Սահմանադրությամբ երկրի ամբողջ կառավարման համակարգը կենտրոնացվել է ՀՀ վարչապետի ձեռքում և այդ ոլորտում իրական որոշում կայացնողը լինելու է ՀՀ վարչապետը:

Աղյուսակ №2.

Այլ լիազորություններ և պարտականություններ

Հ/Հ	2005թ. ՀՀ Սահմանադրությունն ու համապատասխան օրենքները		2015թ. ՀՀ Սահմանադրությունն ու մշակվող օրենքների նախագծերը	
	Լիազորությունները	Իրավական հիմքը	Լիազորությունները	Իրավական հիմքը
ՀՀ նախագահը				
1.	Ուղերձով դիմում է ժողովրդին և ՀՀ Ազգային ժողովին	ՀՀ Սահմանադրություն, հոդված 55	Նախագահը ուղերձով կարող է դիմել ՀՀ Ազգային ժողովին՝ միայն Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված իր լիազորություններին վերաբերող հարցերով: ՀՀ նախագահը ուղերձով ժողովրդին դիմելու լիազորություն չունի:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 128
2.	Ընդունված Օրենքի ստորագրում և հրապարակում: Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն: Այդ ժամկետում կարող է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքն առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 55	ՀՀ նախագահը չի կարող իր առարկություններով և առաջարկություններով հետ վերադարձնել ԱԺ-ի կողմից ընդունված օրենքը: Սահմանադրության տրամաբանությամբ, եթե Նախագահը որևէ խնդիր է տեսնում Օրենքի սահմանադրականության վերաբերյալ, ապա կարող է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան, եթե Սահմանադրական դատարանը գտնի, որ ընդունված Օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Նախագահը այն պետք է վավերացնի, չվավերացնելու դեպքում, այն վավերացնում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 129
3.	Սահմանադրության 74.1-րդ հոդվածով նախատեսված դեպքերում ու կարգով արձակում է Ազգային ժողովը և նշանակում արտահերթ ընտրություն.	ՀՀ Սահմանադրություն, հոդված 55	Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: /Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում/ կամ հավանության չի արժանանում կառավարության ծրագիրը թեկուզ և ընտրվել է վարչապետ:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 149, 151

4.	Միջազգային հարաբերություններում. 1. ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, 2. իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, 3. կնքում է միջազգային պայմանագրեր, 4. Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, 5. հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 55	Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ 1. Կառավարության առաջարկությամբ կնքում է միջազգային պայմանագրեր, 2. վարչապետի առաջարկությամբ նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին, 3. ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը, 4. Հանրապետության նախագահը, Կառավարության առաջարկությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 132
5.	Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին:	ՀՀ Սամանադրություն, հոդված 55	Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 119
6.	Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի	ՀՀ Սամանադրություն, հոդված 55	Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում Կառավարությունը հայտարարում է արտակարգ դրություն, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 120

	հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:			
7.	Օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության և քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերը	ՀՀ Սամանադրություն, հոդված 55	Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 134
8.	Պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում բարձրագույն զինվորական և պատվավոր կոչումներ, բարձրագույն դիվանագիտական և այլ դասային աստիճաններ	ՀՀ Սամանադրություն, հոդված 55	Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում է պատվավոր կոչումներ:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 136
			Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է բարձրագույն դասային աստիճաններ:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 137
9.	Ներում է շնորհում դատապարտյալներին.	ՀՀ Սամանադրություն, հոդված 55	Հանրապետության նախագահն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լուծում է դատապարտյալներին ներում շնորհելու հարցը:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 135
10.	Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին ու ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում:	ՀՀ Սամանադրություն, հոդված 56	Իր լիազորություններն իրականացնելիս Հանրապետության նախագահն ընդունում է հրամանագրեր և կարգադրություններ:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 139

11.	Արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել Հանրապետության Նախագահը:	ՀՀ Սամանադրություն, հոդված 85	Կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը. Նոր Սահմանադրությամբ որևէ այլ անձ կառավարության նիստ հրավիրելու և վարելու լիազորություն չունի:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 153
			Փոխվարչապետներից մեկը վարչապետի սահմանած կարգով փոխարինում է վարչապետին նրա բացակայության ժամանակ:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 152
<u>ՀՀ վարչապետը</u>				
12.	Հանրապետության Նախագահի պարտականությունները կատարման ժամանակավոր անհնարինության դեպքում նրան փոխարինում է վարչապետը, եթե, եթե հնարավոր չէ, որ այն կատարի Ազգային ժողովի նախագահը:	ՀՀ Սամանադրություն, հոդված 60	Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը Հանրապետության նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 144
13.	Սահմանադրության մեջ նշված հիմքերի դեպքում լիազորված է առաջարկ ներկայացնել ՀՀ նախագահին արձակելու ազգային ժողովը	ՀՀ Սամանադրություն, հոդված 74.1	Ազգային ժողովը արձակվում է իրավունքի ուժով, հետևյալ դեպքերում. Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: Եթե Ազգային ժողովն ընտրում է վարչապետին, սակայն կրկին հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով: ույն հոդվածի 3-րդ մասը չի տարածվում Սահմանադրության 115-րդ հոդվածին համապատասխան կազմավորված Կառավարության ծրագրի վրա: Եթե այդ Կառավարության ծրագիրը հավանության չի արժանանում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 149, 151
14.	ՀՀ նախագահի սահմանմանն է ներկայացնում Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների	ՀՀ Սամանադրություն, հոդված 85	Սահմանվելու է օրենքով	ՀՀ Սահմանադրություն, հոդված 147

	գործունեության կազմակերպման կարգի նախագիծը			
15.	Հրավիրում և վարում է կառավարության նիստերը	ՀՀ Սահմանադրություն, հոդված 86	Հրավիրում և վարում է Կառավարության նիստերը.	ՀՀ Սահմանադրություն, հոդված 153
16.	Ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 87	Ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 152
17.	ընդունում է որոշումներ՝ կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 87	Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունները.	ՀՀ Սահմանադրություն, հոդված 152
18.	_	_	Վարչապետը կարող է Կառավարության անդամներին կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալ:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 152
19.	_	_	Վարչապետը գլխավորում է Անվտանգության խորհուրդը	ՀՀ Սահմանադրություն, հոդված 152
20.	_	_	Անհետաձգելի անհրաժեշտության դեպքում զինված ուժերի կիրառման մասին որոշումը, պաշտպանության նախարարի առաջարկությամբ, կայացնում է վարչապետը և այդ մասին անհապաղ տեղեկացնում Կառավարության անդամներին:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 155
21.	_	_	Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է:	ՀՀ Սահմանադրություն, հոդված 155

Ներկայացված աղյուսակը ցույց է տալիս, որ 2005թ. Սահմանադրության համաձայն ՀՀ նախագահի մյուս լիազորությունները սահմանափակվել են, դրանց մի մասը փոխանցվել է կառավարությանը, մյուս մասը Ազգային ժողովին կամ սահմանափակվել են Օրենքով: Մասնավորապես՝

- ՀՀ նախագահն այլևս չի կարող ուղերձով դիմել ժողովրդին: ՀՀ նախագահը ուղերձով կարող է դիմել միայն ՀՀ Ազգային ժողովին, այն էլ իր լիազորություններից բխող հարցերի շրջանակներում;
- ՀՀ նախագահը զրկվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները առարկություններով ՀՀ Ազգային ժողով վերադարձնելու լիազորությունից, այս դեպքում ՀՀ նախագահը լիազորված է դիմել ՀՀ Սահմանադրական դատարանին;
- ՀՀ նախագահն այլևս չի կարող արձակել ՀՀ Ազգային ժողովը և նշանակել նոր ընտրություններ;
- Միջազգային հարաբերություններում ՀՀ նախագահը կարող է կնքել միջազգային պայմանագրեր բացառապես ՀՀ կառավարության առաջարկությամբ;
- ՀՀ նախագահը դիվանագետներին և դեսպաններին նշանակում է ՀՀ վարչապետի առաջարկությամբ;
- ՀՀ նախագահը միայն ՀՀ կառավարության առաջարկությամբ կարող է հաստատել, կասեցնել կամ չեղյալ հայտարարել վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը;
- Ռազմական դրություն հայտարարելու, ընդհանուր կամ մասնակի զորահավաք հայտարարելու լիազորությունը փոխանցվել է ՀՀ կառավարությանը;
- ՀՀ կառավարությանն է փոխանցվել նաև արտակարգ դրություն հայտարարելու լիազորությունը;
- ՀՀ նախագահը այլևս չի կարող հրավիրել և վարել ՀՀ կառավարության նիստ;
- ՀՀ նախագահին է վերապահվել ՀՀ քաղաքացիության հարցի լուծումը;
- ՀՀ նախագահը չի զրկվել շքանշաններով և մեդալներով պարգևատրելու ու դասային աստիճաններ շնորհելու լիազորությունից;
- ՀՀ Անվտանգության խորհրդի նիստերը այլևս վարելու է ՀՀ վարչապետը;
- Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է հանդիսանալու ՀՀ վարչապետը;
- Զինված ուժերի օգտագործման մասին որոշում կարող է կայացնել ՀՀ վարչապետը;
- ՀՀ կառավարության քաղաքականության հիմնական ուղղությունը որոշողը կհանդիսանա ՀՀ վարչապետը:

Աղյուսակ №3.

Պետական մարմինների հաշվետվողականությունը

Հ/Հ	Պետական մարմին	2005թ. ՀՀ Սահմանադրությամբ հաշվետու մարմին	2015թ. ՀՀ Սահմանադրությամբ հաշվետու մարմին	Նշումներ
1.	ՀՀ կառավարություն	ՀՀ Ազգային ժողով 74-րդ, 76-րդ, 77-րդ, 80-րդ, 84-րդ հոդվածները	ՀՀ Ազգային ժողով 88-րդ, 110-րդ, 112-րդ, 113-րդ հոդվածները	
2.	ՀՀ կառավարության անդամ (փոխվարչապետ, նախարարներ)	Վարչապետ 87-րդ հոդվածը	Վարչապետ 152-րդ հոդվածը	
3.	Ազգային անվտանգության խորհուրդ	ՀՀ նախագահ 55-րդ հոդվածը	Վարչապետ 152-րդ հոդվածը	
4.	Դիվանագիտական ներկայացուցիչ	ՀՀ նախագահ 55-րդ հոդվածը Արտաքին գործերի նախարար «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 15-րդ, 17-րդ հոդվածները	Վարչապետ 152-րդ հոդվածը Արտաքին գործերի նախարար՝ որպես անմիջական ղեկավրի	

5.	Գլխավոր դատախազ	ՀՀ Նախագահ և Ազգային ժողով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը	Ազգային ժողով «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքի 5-րդ հոդվածը /ընդունվել է 17.11.2017թ./ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117713	
6.	Գլխավոր դատախազի տեղակալ	ՀՀ գլխավոր դատախազ «Դատախազության մասին» ՀՀ օրենի 10-րդ հոդվածը	ՀՀ գլխավոր դատախազ «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքի 9-րդ հոդվածը /ընդունվել է 17.11.2017թ./ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117713	
7.	Սահմանադրական դատարանի դատավորները	հաշվետու չեն «Սահմանադերական դատարանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը ՀՀ նախագահը Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:	հաշվետու չեն «Սահմանադերական դատարանի մասին» նոր օրենքի 7-րդ հոդվածը Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ: Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Սահմանադրության 164-րդ հոդվածը	

		Սահմանադրության 55-րդ հոդվածը		
8.	Վճռաբեկ, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներ.	Հաշվետու են Օրենքին Հարկ է ընդգծել, որ ՀՀ նախագահը այս առումով ունի մեծ լիազորությունները և անուղղակի առումով Դատավորները գտնվում են կախվածության մեջ: Դատական օրենսգիրքի 11-րդ, 13-րդ հոդվածները	Հաշվետու են Օրենքին ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդված, Նոր դատական օրենսգիրքի 7-րդ հոդվածը	
9.	Վճռաբեկ դատարանի դատավորներ	Հաշվետու են Օրենքին Հարկ է ընդգծել, որ ՀՀ նախագահը այս առումով ունի մեծ լիազորությունները և անուղղակի առումով Դատավորները գտնվում են կախվածության մեջ. Դատական օրենսգիրքի 11-րդ, 13-րդ հոդվածները	Հաշվետու են Օրենքին ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդված, Դատական օրենսգիրքի 11-րդ, 13-րդ հոդվածները	
10.	Վերաքննիչ դատարանի, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանի դատավորներ	Հաշվետու են Օրենքին Հարկ է ընդգծել, որ ՀՀ նախագահը այս առումով ունի մեծ լիազորությունները և անուղղակի առումով Դատավորները գտնվում են կախվածության մեջ: Դատական օրենսգիրքի 11-րդ,	Հաշվետու են Օրենքին ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդված, Դատական օրենսգիրքի 11-րդ, 13-րդ հոդվածները	

		13-րդ հոդվածները		
11.	Զինված ուժերի և այլ զորքերի հրամանատարական կազմ.	ՀՀ նախագահ, Պաշտպանության նախարար	ՀՀ վարչապետ, ՀՀ պաշտպանության նախարար	
12.	Քննչական կոմիտեի նախագահ	ՀՀ Նախագահ, Կառվարություն, «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված	Կառավարություն	Տես «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:
13.	Հատուկ քննչական ծառայության պետ.	ՀՀ Նախագահ, Կառավարություն «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը	Կառավարություն	Տես «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:
14.	Քրեակատարողական վարչության պետ	Ուղղակի նախատեսված կարգավորում գոյություն չունի, սակայն «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությամբ վարչության պետը հաշվետու է Հանրապետության նախագահին և արդարադատության նախարարին:	Վարչապետ և ՀՀ արդարադատության նախարար	Տես «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը:
15.	Ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավար և տեղակալ (ոստիկանության պետ, պետի տեղակալ)	Գործող Օրենքի ընդհանուր մեկնաբանությունից բխում է, որ հաշվետու է ՀՀ նախագահին և կառավարությանը.	Ոստիկանությունը այլևս լինելու է վարչապետին կից պետական մարմին, ինչից բխում է, որ Ոստիկանությունը հաշվետու է լինելու հենց Վարչապետին և որևէ էական նշանակություն չունի, որ ոստիկանության պետը և տեղակալը նշանակվելու է ՀՀ նախագահի կողմից:	Տես՝ Օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագծում:
16.	Ոստիկանության	Գործող օրենքի ընդհանուր	Ոստիկանությունը այլևս լինելու է վարչապետին կից	Տես՝ Օրենքում

	զորքերի հրամանատար.	մեկնաբանությունից բխում է, որ հաշվետու է ՀՀ նախագահին և կառավարությանը:	պետական մարմին, ինչից բխում է, որ Ոստիկանությունը հաշվետու է լինելու հենց Վարչապետին և որևէ էական նշանակություն չունի, որ ոստիկանության պետը և տեղակալը նշանակվելու է ՀՀ նախագահի կողմից:	փոփոխություն կատարելու մասին նախագծում:
17.	Գլխավոր հարկադիր կատարող. /ԴԱՀԿ պետ/	«Հարկադիր կատարման ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ Հարկադիր կատարման ծառայությունը հաշվետու է ՀՀ արդարադատության նախարարությանը և անուղղակի կերպով ՀՀ նախագահին:	«Հարկադիր կատարման ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ Օրենքի նախագծով նախատեսվում է, որ Գլխավոր հարկադիր կատարողը նշանակվելու է ՀՀ վարչապետի կողմից՝ Նախարարի առաջարկությամբ, ինչից կարող ենք պնդել, որ հաշվոտու է լինելու ՀՀ ԱՆ նախարարին և վարչապետին:	Տես՝ https://www.e-draft.am/projects/683/about
18.	Ազգային անվտանգության լիազոր մարմնի ղեկավար /ԱԱԾ պետ/	Ըստ գործող օրնսդրության տրամաբանությամբ ԱԱԾ-ի պետը հաշվետու է ՀՀ վարչապետին և ՀՀ նախագահին	Սահմանադրությամբ փոփոխությամբ պայմանավորված ներկայացված նախագծի տրամաբանությամբ Ազգային անվտանգության ծառայությունը գործելու է վարչապետին ենթակա, ինչից բխում է, որ վերջինս հաշվետու է լինելու Վարչապետին:	Տես հետևյալ հղումով https://www.e-draft.am/projects/683/about

Թվարկված 18 պետական մարմիններից 15-ը ՀՀ 2005 թ. Սահմանադրությամբ հաշվետու են եղել ՀՀ նախագահին, որոնցից 6-ն ուղղակի նախատեսված էր ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, 9-ը՝ բխում էր Սահմանադրության և օրենքի ընդհանուր մեկնաբանությունից:

Ներկայացված աղուսյակից հետևում է, որ այլևս որևէ պետական մարմին հաշվետու չեն ՀՀ նախագահին և 2005թ. Սահմանադրության համաձայն գործող օրենքները փոխվում են այն տրամաբանությամբ, համձայն որի.

ՀՀ կառավարությանը հաշվետու են լինելու.

- Հատուկ քննչական ծառայությունը,
- Քննչական կոմիտեն.

ՀՀ վարչապետին հաշվետու են լինելու.

- ՀՀ կառավարության անդամները,
- ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդը,
- դիվանագիտական ներկայացուցիչները,
- զինված ուժերը,
- քրեակատարողական վարչությունը,
- ոստիկանությունը,
- դատական ակտեր հարկադիր կատարման ծառայությունը,
- ազգային անվտանգության ծառայությունը.

ՀՀ Ազգային ժողովին հաշվետու են լինելու.

- Դատական համակարգը
- Դատախազությունը: